**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 161

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0074-0009 ծածկագրի 0,083 հա տնամերձ հողամասին տրամադրել 7 փողոց, 7 փկղ, 6 փոստային հասցեն:
2.Դիմել Կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը փոստային հասցեն գրանցելու:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 162

06-033-0220-0093 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, "Տեղական ինքնակառավարման մասին "ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,հաշվի առնելով Դարպաս համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական ի անձնաժողովի 04.04.1991թ-ի 02 որոշումից քաղվածքը, Վրեժիկ Ժորայի Աբրահամյանի դիմումը և քանի որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հաղամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով.

Որոշում եմ՝

1.Վերականգնել Վրեժիկ Ժորայի Աբրահամյանի / ծնված 1955թ./, Պարսամ Վրեժիկի Աբրահամյանի /ծնված 1977թ./, Նվեր Վրեժիկի Աբրահամյանի /ծնված 1980թ./, Անուշ Վրեժիկի Աբրահամյանի /1983թ/, Վաչագան Վրեժիկի Աբրահամյանի /ծնված 1986թ./ համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-033-0220-0093 ծածկագրով 0.15 հա վարելահողի հողհատկացման հիմքերը:
3.Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ:
4.Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2021 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 154 որոշումը:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 163

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումը`
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0067-0004 ծածկագրի 0,12842 հա տնամերձ հողամասին տրամադրել 6 փող, 8 նրբ, 22/1 փոստային հասցեն:
2.Դիմել Կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը փոստային հասցեն գրանցելու:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ`** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 164

## 06-033-0067-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հաշվի առնելով Դարպաս համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 04.04.1991թ-ի 02 որոշումից քաղվածքը, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, հիմք ընդունելով "Գասպար Վեքիլյան" ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, Ելենա Հակոբյանի դիմումը և քանի որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց և իրավունքները օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք `

Որոշում եմ.

1. Վերականգնել Դարպաս համայնքի 06-033-0067-0004 ծածկագրի հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը.
   ա) հողամասի մակերեսը 0.12842 հա
   բ) հողամասի սահմանները և մակերեսը համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից 0.1 հա օրինական հողամասը և ինքնակամ զբաղեցված և առ այսօր առանց իրավունք հաստատող փաստաթղթերի օգտագործվող 0,02842 հա մակերեսով հողամասի նկատմամբ և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող օրինական հողամասը օրենքի ուժով, անհատույց ճանաչել Ելենա Վահագի Հակոբյանի /ծնված 1960թ./ սեփականության իրավունքը:

3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**